«ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ Կ-163-10.02.2022-ՊԻ-011/1Կ-163-10.02.2022-ՊԻ-011/1 ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

1. Նախագծի 1-րդ հոդվածով խմբագրվող 2-րդ հոդվածի 1-ին մասում.

1) 2-րդ կետում «65 տարին լրանալու դեպքում» բառերը փոխարինել «անկախ տարիքից» բառերով:
2) 6-րդ կետում «65 տարին լրանալու դեպքում» բառերը փոխարինել «անկախ տարիքից» բառերով:
3) 8-րդ կետում «հիմքերով» բառերից հետո լրացնել «կամ դատավորի պաշտոնում առնվազն 25 օրացուցային տարի պաշտոնավարած անձը, որի լիազորությունները դադարել են «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով»

2. Նախագծի 1-ին հոդվածով խմբագրվող 6-րդ հոդվածը լրացնել նոր՝ 5.1 մասով.
Քրեական հետապնդման մարմիններում պաշտոն զբաղեցրած և առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական ստաժ ունեցող անձը չի կարող զրկվել սույն օրենքով նշանակված կենսաթոշակ ստանալու իրավունքից, բացառությամբ այն դեպքերի, երբ նա օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռով դատապարտվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության կատարելու համար:

3. Նախագծի 4-րդ հոդվածը լրացնել նոր՝ 2-րդ մասով.
«2. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 9-12-րդ հոդվածների իմաստով մասնագիտական ստաժ է համարվում Հայաստանի Հանրապետության քրեական հետապնդման մարմիններում աշխատանքի այն ժամանակահատվածները, որոնց ընթացքում կատարվել անձի կրթության կամ անհրաժեշտ որակավորման մասին վկայականում նշված մասնագիտությամբ աշխատանք կամ զբաղեցվել է որոշակի պաշտոն կամ կատարվել է աշխատանք աշխատանքի առանձնահատուկ պայմաններում, ինչպես նաև այլ ժամանակահատվածներ, որոնք թույլատրվում է հաշվարկել տվյալ տիպի աշխատանքային ստաժում»

4. Նախագծի 4-րդ հոդվածը լրացնել նոր՝ 3-րդ մասով.
«3. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով սահմանված կարգը կիրառվում է բացառապես այն անձանց նկատմամբ, որոնց պաշտոնավարումը սույն օրենքի N 1 հավելվածով սահմանված պաշտոններում կամ օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմինների ղեկավարի պաշտոնում սկսել է սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո: